

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միություն

Լիլիթ Մկրտչյան

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ՄԱՍՆԱԽՄԲԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ
ԴԱՍԵՐ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Երևան
2014



Հումանիտար առարկաների ինտեգրված դասերի օրինակներ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ դասարանների համար

«Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝ Միջառարկայական
 Առարկան՝ «Հայոց պատմություն (նորագույն շրջան)»

Դասարանը՝ 9-րդ կամ 12-րդ դասարաններ

Ամիս, ամսաթիվ՝ --. --. 2014 թ.
 Տևողությունը՝ 45 րոպե

Թեման՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ (1941 - 1945 թթ.)

Դաս 1. Պատերազմի սկիզբը: Ուժերի համախմբումը

- Պատերազմի սկիզբը
- Ուժերի համախմբումը

Հարակից առարկաները՝

- ա) Գրականություն, ուս.՝ -----
- բ) Արվեստի պատմություն, ուս.՝ -----
- գ) Երգ, ուս.՝ -----
- դ) Պար, ուս.՝ -----
- ե) Համաշխարհային պատմություն, ուս.՝ -----

Նպատակներ

1. Իմանալ և ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբի, հակադիր ուժերի համախմբումը: Հասկանալ ժամանակաշրջանում տիրող աշխարհաքաղաքական իրադրությունը:

Խնդիրներ

1. Վեր հանել Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառներն ու հետևանքները:



2. Վեր հանել Հայրենական մեծ պատերազմի պատճառներն ու հետևանքները:

3. Պատերազմի հայ հերոսների սխրագործության օրինակով հայրենասեր և օրինակելի քաղաքացի դաստիարակել:

Մեթոդներ և մեթոդական հնարներ. Կարճ դասախոսություն, խմբային աշխատանք, աշխատանք աղբյուրների հետ և աշխատանքի ներկայացում, քննարկում, զեկույցներ, ունկնդրում, ցուցադրում, դիտում, համեմատություն, վերլուծություն:

Պարագաներ. Թուղթ, գունավոր նշագրիչներ, համակարգիչ, կավիճ, գրատախտակ, քարտեզներ (Երկրորդ համաշխարհային պատերազմի կամ Հայրենական մեծ պատերազմի քարտեզ, կամ տվյալ ժամանակաշրջանի Եվրոպայի կամ աշխարհի քարտեզ):

Դասի ընթացքը

Դասը սկսվում է ուսուցչի կարճ դասախոսությամբ սովորողներին ներկայացնում է դասանյութը՝ միաժամանակ զուգակցելով նաև համապատասխան նյութի՝ նկարների կամ տեսաֆիլմի ցուցադրությունը, թե ե՞րբ է սկսվել և ավարտվել Երկրորդ համաշխարհային պատերազմը, ինչու՞ է ստացել «Հայրենական մեծ պատերազմ» անվանումը, որո՞նք էին այդ պատերազմի ծագման պատճառները, ի՞նչ ավարտ ու հետևանքներ ունեցավ այն, հայ ժողովուրդը ի՞նչ ներդրում է ունեցել ֆաշիզմի ջախջախման գործում, այդ պատերազմի թեման ի՞նչ արձագանքներ է ունեցել, ինչպե՞ս է ներկայացվել հայկական մշակույթում, ինչպե՞ս է այժմ ներկայանում սերունդների հիշողության մեջ:

Փոքրիկ դասախոսությունից հետո կազմակերպում են բանավեճ <<Պատերազմի դրական և բացասական հետևանքները>> թեմայով:

Որից հետո ուսուցիչը ամփոփում է դասը:

Դասի ամփոփում. Դասը ամփոփելու համար սովորողները պաստառին գրում են երեք հիմնական գաղափար, որը նրանք հիշեցին, եզրակացություններն ու ընդհանրացումները: Այնուհետև կատարում են քննարկում, բանավեճ, հարց ու պատասխան, ուսուցիչը հարցերի միջոցով կատարում է անդրադարձ, ամփոփում է աշխատանքը և խմբերին տալիս է տնային հանձնարարություն:

1) Ներկայացնել իրենց բնակավայրի (կամ իրենց այցելած) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի մասնակիցներին նվիրված հուշարձանի պատմությունը:

2) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի թեմայի արձարձումը հայկական գեղարվեստական կինոնկարներում. ֆիլմերի բովանդակության համառոտ ներկայացում:



3) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի թեման խորհրդահայ արձակում. մի քանի նշանավոր արձակ ստեղծագործությունների թվարկում և բովանդակության համառոտ ներկայացում:

4) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի թեման խորհրդահայ պոեզիայում. նշանավոր հայ բանաստեղծների գործերի թվարկում և ասմունք:

Համագործակցական խմբերի նպատակը.

- Խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել:
- կարողանալ ճիշտ բացատրել:
- կարողանալ տրամաբանված վերլուծել

Վերահսկում և միջամտում.

- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

Գնահատում(նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).

- Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Օգնություն ուսուցչին

http://hy.wikipedia.org/wiki/Երկրորդ_համաշխարհային_պատերազմ

<http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1154>

<http://www.dasaran.am/apps/wiki/view/id/9455>

<https://www.google.am/search?>

<q=Երկրորդ+համաշխարհային+ժպատերազմ&biw=1280&bih=625&tbm=isch&tbo=u&source=univ&sa=X&ei=AcU-VLj0E4HMyAOul4GwAQ&ved=0CDMQsAQ>



ԱՆՄԱՐ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝ Միջառարկայական
Առարկան՝ «Հայոց պատմություն (նորագույն շրջան)»

Դասարանը՝ 9-րդ կամ 12-րդ դասարաններ

Ամիս, ամսաթիվ՝ --. --. 2014 թ.
Տևողությունը՝ 45 րոպե

Թեման՝ **Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941 - 1945 թթ.)**

Դաս 1. Հայ ժողովրդի զավակները ռազմի դաշտում

- Հարակից առարկաները՝
- ա) Գրականություն, ուս.՝ -----
 - բ) Արվեստի պատմություն, ուս.՝ -----
 - գ) Երգ, ուս.՝ -----
 - դ) Պար, ուս.՝ -----
 - ե) Համաշխարհային պատմություն, ուս.՝ -----

Նպատակներ

1. Իմանալ և ներկայացնել հայ ժողովրդի ներդրումը Հայրենական մեծ պատերազմում և սերունդների մոտ պատմական հիշողության կարևորության գաղափարի պատվաստում:

Խնդիրներ

1. Պատերազմի հայ հերոսների սխրագործության օրինակով հայրենասեր և օրինակելի քաղաքացու դաստիարակում:

2. Հայրենիքի համար անձնագոհաբար կռված մարտիկների հիշատակի նկատմամբ երախտագիտության, հպարտության ու հարգանքի զգացումների սերմանում:

Մեթոդներ և մեթոդական հնարներ. Կարճ դասախոսություն, խմբային աշխատանք, աշխատանք աղբյուրների հետ և աշխատանքի ներկայացում, քննարկում, զեկույցներ, ունկնդրում, ցուցադրում, դիտում, համեմատություն, վերլուծություն:



Պարագաներ. Թուղթ, գունավոր նշագրիչներ, համակարգիչ, կավիճ, գրատախտակ, քարտեզներ (Երկրորդ համաշխարհային պատերազմի կամ Հայրենական մեծ պատերազմի քարտեզ, կամ տվյալ ժամանակաշրջանի Եվրոպայի կամ աշխարհի քարտեզ):

Դասի ընթացքը

Դասի սկզբում ուսուցիչը աշուղ Աշոտի «Հուշարձաններ» երգի հնչունների տակ ցուցադրում է «Փառքի հուշարձաններ» (հեղինակ–կազմող՝ Կ. Ղալաչյան, Հայաստան հրատ., Երևան, 1986, 248 էջ) պլումից նկարազարդումներ: Այնուհետև սովորողներին է ուղղում հետևյալ հարցերը.

ա) Ի՞նչ հուշարձաններ էին, արդյոք ծանոթ են այդ հուշարձաններին, երբևէ տեսել են:

բ) Ու՞մ հիշատակն են հավերժացնում այդ հուշարձանները, ո՞ր պատերազմի հերոսների:

գ) Ի՞նչ գիտեն նրանք այդ պատերազմի մասին, ի՞նչ են լսել իրենց ծնողներից կամ տատիկ–պապիկներից:

Սովորողների պատասխանները լսելուց և ամփոփելուց հետո դասարանը բաժանում խմբերի՝ յուրաքանչյուր խմբի տալով 1-2 էջանոց նյութ: Դրանով սովորողները աշխատում են, ճիշտ դասավորությամբ ներկայացնում են այն (ուսուցիչը նյութը հանձնում է մի քանի մասերի բաժանված, խառը հերթականությամբ), փորձում են վերնագրել այն և պատասխանել նյութի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին (ո՞վ էր հերոսը, իրենց ծանոթ էր նրա անունը կամ սխրանքը, որտե՞ղ է մարտնչել, քարտեզի վրա ցույց տալ հերոսի անվան հետ կապված տեղանունները, ի՞նչ մասնագիտություն է ունեցել, ո՞ր զորատեսակներում է պայքարել, ի՞նչ ճակատագիր է ունեցել, ներկայացրեք ձեր վերաբերմունքը):

Դասի ամփոփում. Տեքստերի ուսումնասիրությունից և քննարկումներից հետո սովորողները պաստառին գրում են իրենց առաջադրանքի պատասխանները, եզրակացություններն ու ընդհանրացումները: Այնուհետև ամբողջ խմբով ներկայացնում են իրենց տեքստի բովանդակությունը և պատասխանում առաջացած հարցերին: Վերջում, մյուս խմբերի և ներկայացրած խմբի սովորողների օբյեկտիվ գնահատականները հաշվի առնելով, ուսուցիչը գնահատում է խմբի աշխատանքը: Երբ արդեն բոլոր խմբերը ներկայացրել են իրենց աշխատանքները, կատարվել են քննարկումներ, բանավեճ, հարց ու պատասխան, ուսուցիչը հարցերի միջոցով կատարում է անդրադարձ, ամփոփում է աշխատանքը և խմբերին տալիս է տնային հանձնարարություն:



2) Գտնել և գրուցել Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմին մասնակցած հերոսի կամ նրա ժառանգի հետ, գրառել այդ հիշողությունները:

6) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի տարիներին ստեղծված հայ մշակույթի նշանավոր արժեքներ (գրականություն, կինո, երաժշտություն, ճարտարապետություն և այլն):

7) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի թեման խորհրդահայ կերպարվեստում. նշանավոր հայ արվեստագետների ստեղծագործությունների թվարկում և արտատպությունների ցուցադրում:

8) Համաշխարհային (Հայրենական մեծ) պատերազմի թեման խորհրդահայ երաժշտության մեջ. նշանավոր հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների թվարկում և ունկնդրում:

Համագործակցական խմբերի նպատակը.

- Խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել:
- կարողանալ ճիշտ բացատրել:
- կարողանալ տրամաբանված վերլուծել

Վերահսկում և միջամտում.

- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

Գնահատում(նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).

- Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Օգնություն ուսուցչին

Նյութը կներկայացվի կից փաստաթղթով



Խորհրդային Հայաստանում եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությունը 60-80-ական թթ.

Երանի այն երիտասարդներին,
Ովքեր գիտեն՝ ի՛նչ կարդալ,
ե՛րբ կարդալ և ինչքա՛ն կարդալ:
Վազգեն Ա

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝ Միջառարկայական
Առարկան՝ «Հայոց պատմություն (նորագույն շրջան)»
Դասարանը՝ 9-րդ կամ 12-րդ դասարաններ
Ամիս, ամսաթիվ՝ --. --. 2014 թ.
Տևողությունը՝ 45րոպե
Թեման՝ Խորհրդային Հայաստանում եկեղեցու նկատմամբ կիրառվող

քաղաքականությունը 60-80-ական թթ.

Դաս 1. Հայոց եկեղեցու կրոնական քաղաքականությունը

- Կրոնական քաղաքականությունը
- Վազգեն Ա կաթողիկոսը՝ հոգևոր առանջորդ.
- Սփյուռքը և Մայրիայրենիքը

- Հարակից առարկաները՝**
- ա) Գրականություն, ուս.՝ -----
 - բ) Հայոց եկեղեցու պատմություն, ուս.՝ -----
 - գ) Արվեստի պատմություն, ուս.՝ -----
 - դ) Երգ, ուս.՝ -----
 - ե) Համաշխարհային պատմություն, ուս.՝ _____

Նպատակներ

1. Դասընթացի նպատակն է ներկայացնել Խորհրդային Հայաստանում 60-80-ական թթ-ին հայոց եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությունը, թե ինչպիսին էր պաշտոնական կրոնական քաղաքականությունը նշված ժամանակաշրջանում, արդյոք ազգային զարթոնքին նպատեց նաև եկեղեցին, ինչ դեր ունեցավ հայոց եկեղեցին հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում:

Խնդիրներ



Վեր հանել ժամանակին տիրող քաղաքականության պատճառներն ու հետևանքները. Խորհրդային վարչակարգի գաղափարախոսությունը, որը իր մեջ ուներ կրոնին ու եկեղեցուն փոխարինող տարրեր. հույս ապագայի ու վաղվա օրվա նկատմամբ, առաջնորդի պաշտանմունք:

2. Լուսաբանել եկեղեցու ունեցած տեղն ու դերը հայապահպանության գործընթացում:

Մեթոդներ և մեթոդական հնարներ. Կարճ դասախոսություն, խմբային աշխատանք, աշխատանք աղբյուրների հետ և աշխատանքի ներկայացում, անհատական աշխատանք, քննարկում, զեկույցներ, ունկնդրում, ցուցադրում, դիտում, համեմատություն, վերլուծություն:

Պարագաներ. Թուղթ, գունավոր նշագրիչներ, համակարգիչ, կավիճ, գրատախտակ, նկարներ:

Դասի ընթացքը.

Դասը սկսվելու է «Փչացած հեռախոս» խաղով: Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին թղթիկների վրա գրել մեկ բառ կամ արտահայտություն (մաքսիմում երեք բառ), որը նրանց պատկերացմամբ բնութագրում է. «ինչ տեղ ունի կրոնը ձեր կյանքում» ասելով: Այնուհետև փակցնում են գրատախտակին և բարձրաձայն կարդում: Արդյունքում ստացվելու է բառերի կույտ, որը գրեթե հեռու է լինելու բովանդակային մասից, որից հետո 3-5 բուպե քննարկում են, ապա ուսուցիչը բացատրում է՝ ավելացնելով, որ մեր պատկերացումները գրեթե նույնն են և միևնույն ժամանակ տարբեր 60-80-ական թվականներից, որովհետև կրոնը ոչ միայն հոգևոր, այլև սոցիալական երևույթ է, սովորական մարդու կրոնական զգացում, որը ինչ որ չափով կախված է այն հասարակական կարգից և քաղաքական ռեժիմից, որտեղ նա ապրում է: Ուսուցիչը ամփոփում է այս ամենը, առաջարկում համակարգել մեր ստացած գիտելիքները:

Խաղից հետո դիտում են Մեր մեծերը ֆիլմաշարից Վազգեն Ա կաթողիկոսին նվիրված ֆիլմից փոքրիկ հատված, որից հետո մտազրոհի միջոցով ուսուցիչը փորձում է վեր հանել աշակերտների գիտելիքները հայոց եկեղեցու պատմության, հայ և համաշխարհային կրոնների մասին...:

Այնուհետև ամփոփելով ֆիլմը, ուսուցիչը առաջարկում է դուրս բերել երեք կարևոր գաղափար ֆիլմից, որը աշակերտները գիտեին և որը աշակերտները հիշեցին...:

Հարց դասարանին- Արդյոք կրոնը ազդում է մարդու անհատականության և ազգի տեսակի ձևավորման վրա: Ի՞նչ կրոններ գիտեք: Ինչպես են այդ կրոնները փոխել իրենց ժողովուրդների պատմության ընթացք...:



Ժամանակագրական հաջորդականությունը պահպանելով, ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին Հայոց պատմության դասագրքից գտնել, կարդալ ու վերհիշել հայ եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությունը, երբ Հայաստանում հաստատվեց խորհրդային հասարակարգը: Ուսուցչի օգնությամբ աշակերտները քննարկում են եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությունը առհասարակ Խորհրդային Ռուսաստանում, ապա մասնավորեցնում Խորհրդային Հայաստանում: Անդրադառնալով Մայր Աթոռը փակելու ստալինյան որոշմանը, Խորեն Մուրադբեկյանի սպանությանը և այլն: Ապա անդրադառնում խրուշչովյան ձնհալի քաղաքականությունը, որով էլ և պայմանավորված էր Վազգեն Ա-ի քաղաքականությունը:

Դասի այս հատվածը քննարկելուց, անհասկանալի հարցերին պատասխանելուց և աշակերտների կարծիքը լսելուց հետո ուսուցիչը փոքրիկ դասախոսություն է կարդում հայոց եկեղեցու վարած քաղաքականությանը 1960-80-ական թվականների մասին, որը կապված էր Վազգեն Ա կաթողիկոսի գործունեության հետ:

Միաժամանակ ցույց տալով և եկեղեցիների նկարները՝ համադրությամբ և հին և նոր նկարները: Առհասարակ հնարավորինս նյութը համեմել դիդակտիկ նյութերով, ինչի մասին, որ խոսելու է:

Դասի այս հատվածն էլ քննարկելուց ու ամփոփելուց հետո, թեկուզ հպանցիկ բայց անպայման կարելի է անդրադառնալ հայրենիք-սփյուռք կապերին և այստեղ եկեղեցու խաղացած դերին:

Դասի ամփոփում.

Դասի վերջում ամփոփելով դասը աշակերտները պաստառին գրում են թե ինչ սովորեցին իրենց եզրակացություններն ու ընդհանրացումները: Վերջում, ուսուցիչը հարցերի միջոցով կատարում է անդրադարձ, ամփոփում է դասը անդրադառնալով հիմնական գաղափարներին, որոնք հնչեցին դասի ժամանակ.

- Խորհրդային վարչակարգի գաղափարախոսությունը, որը արդեն իր մեջ ուներ կրոնին ու եկեղեցուն փոխարինող տարրեր, հույս ապագայի հանդեպ, առաջնորդի պաշտանմունք, Լենինի չթաղված դի՝ որպես հարատևության խորհուրդ: Այսինքն քրիստոնեությունը կամ իսլամը սովետական երկրներում իրենց տեղը զիջել էին լրիվ այլ գաղափարախոսության:
- Կրոն՝ Խորհրդային Հայաստանում քրիստոնեությունը, հավատ որպես անհատական երևույթ, որն արտահայտվում էր տոնի, անադույթի, պարի, երգի և այլնի միջոցով:



- Կրոն-հավատ-եկեղեցի՝ միավորող, սոցիալական, ազգապահպան գործընթաց և այս հենքի վրա վեր հանել Վազգեն Ա-ի գործունեությունը

Այս ամենի ենթատեքստում կարմիր գծի նման անցկացնել, թե ինչպես է եղեցու և կաթողիկոսի գործունեությունը ազդում սովորական հավատացյալի կրոնական զգացումների վրա, ինչպես է փոխվում ազգի նկարագիրը, միավորում ժողովրդին, կապ հաստատում Սփյուռքի հետ:

Աշակերտները ստանում են տնային հանձնարարությունը:

Տնային աշխատանք.

Զրուցել տատիկների, պապիկների ու ծնողների հետ, գրի առնել մի հետաքրքիր ավանդույթ՝ պահպանված իրենց ընտանիքներում: Ցանկալի է աշակերտները անհատապես կամ ցանության դեպքում խմբերով այցելեն հատկապես գյուղեր և տարեց մարդկանց հարցնեն, թե ինչ արարողակարգով էր անցկացվում ծնունդը, կնունքը, տոները և այլն, փորձել ձայնագրել ու նկարել տատիկ-պապիկների երգերն ու պարը, պատմությունները: Յուրաքանչյուր աշակերտ պատրաստելու է մեկ զեկուցում, որը ներկայացնելու է հաջորդ դասի ժամանակ:

Համագործակցական խմբերի նպատակը.

- Անհատական և խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել:
- կարողանալ ճիշտ բացատրել:
- կարողանալ տրամաբանված վերլուծել

Վերահսկում և միջամտում.

- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

Գնահատում (նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).

- Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Օգնություն ուսուցչին.

Անդրադառնալով՝

1. Վազգեն Ա-ն պարզևատրվել է մի շարք շքանշաններով-Խաղաղության համաշխարհային խորհրդի Ժոլիո Կյուրիի անվան մեդալ՝ 1962, Խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի ոսկե մեդալ՝ 1968, Պատվո նշան՝ 1968, Ժողովուրդների բարեկամություն՝ 1978:



2. Վազգեն Ա ն կարատել է եկեղեցաշինական-վերանորոգչական աշխատանքներ /Մայր Տաճար, Հոփսիսիմե, Գայանե, Շողակաթ, Օշականի Մեսրոպ Մաշտոց և այլն..
3. Կառուցել մի շարք հուշարձան կոթողներ՝ Խրիմյան Հայրիին նվիրված, Ալեք և Մարի Մանուկյանների գանձատուն, վերագինվել է Մայր Աթոռի տպարանը:
4. Մատենադարանին է նվիրել Վեհամոր և Վեհափառի Ավետարանները
5. Հայ եկեղեցին 1962 –ին դարձել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ, այնուհետև՝ եվրոպական եկեղեցիների համաժողովի անդամ:

Հայրենիք-Սփյուռք կապեր

1960թ. սեմտեմբերի 26-Երևանում բացվեց ուսուցիչների համագումարը

1962թ. մայիսի 27- տոնվեց Մեսրոպ Մաշտոցի 1600 ամյակը

1964թ, հունիսի 25-Երևանում հիմնադրվեց Սփյուռքահայության հետ կապի կոմիտե

1966 թ. մարտի 5- բացվեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնի նոր շենքը

1967թ. նոյեմբերի 28- Ծիծեռնակաբերդ

<http://blognews.am/arm/news/27489/82-tari-araj-ays-ory-kayacvec--sb-poxos-petros-ekexecin-qandelu-masin-hantcharex--oroshumy.html>

[http://historicaldis.ru/blog/4377114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?](http://historicaldis.ru/blog/4377114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1)

[utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1](http://historicaldis.ru/blog/4377114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1)

<https://www.slaq.am/arm/news/151219/>

http://masis.tv/component/option,com_afm/pid,128/vfile,1712/lang,hy/

<https://www.youtube.com/watch?v=JumYRLEzWjU>

<http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=5055>

<http://hetq.am/arm/print/10138/>

https://www.facebook.com/note.php?note_id=291922430822840



Անորյա կյանքը խորհրդային տարիներին. 60-80-ական թթ.

*Երանի այն երիտասարդներին,
ովքեր գիտեն՝ ի՛նչ կարդալ,
ե՛րբ կարդալ և ինչքա՛ն կարդալ:
Վազգեն Ա*

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝
Առարկան՝

Միջառարկայական
«Հայոց պատմություն (նորագույն շրջան)»

Դասարանը՝

9-րդ կամ 12-րդ դասարաններ

Ամիս, ամսաթիվ՝
Տևողությունը՝

--. --. 2014 թ.
45 րոպե

Թեման՝

Անորյա կյանքը խորհրդային տարիներին. 60-80-ական թթ.

Դաս 1. Կրոնը անորյակյանքում

- տոներ՝ Զատիկ, Համբարձում, Վարդավառ
- ծեսերն արարողություններ՝ ծնունդ, կնունք, հոգեհանգիստ
- հուշարձաններ՝ Եկեղեցիներ, մատուռներ, սրբատեղիներ

Հարակից առարկաները՝

- ա) Գրականություն, ուս.՝ -----
- բ) Հայոց եկեղեցու պատմություն, ուս.՝ -----
- գ) Արվեստի պատմություն, ուս.՝ -----
- դ) Երգ, ուս.՝ -----
- ե) Պար, ուս.՝ -----

Նպատակներ

1. Դասընթացի նպատակն է ներկայացնել ժողովրդի անորյա կյանքը Խորհրդային Հասյաստանում 60-80-ական թթ-ին, որին անդրադառնալու ենք մի քանի ասպեկտով՝ տոնա-ծիսական միջոցառումները, երգերը, պարերը, ավանդույթները: Փորձելով աշակերտներին ներկայացնել, որ քաղաքական պատմությունից զատ կա և հասարակական-տնտեսական պատմություն:

Խնդիրներ

1. Վեր հանել այն ավանդույթները, որոնց օգնությամբ մարդն ապրում էր իր անորյա կյանքը:



2. Ծանոթանալ ազգային երգի, պարի հետ:

3. Ճանաչել, սովորել ու դառնալ կրողը ազգային տոնի, ավնդույթի ու ծեսի:

Մեթոդներ և մեթոդական հնարներ. Կարճ դասախոսություն, խմբային աշխատանք, աշխատանք աղբյուրների հետ և աշխատանքի ներկայացում, անհատական աշխատանք, քննարկում, զեկույցներ, ունկնդրում, ցուցադրում, դիտում, համեմատություն, վերլուծություն:

Պարագաներ. Թուղթ, գունավոր նշագրիչներ, համակարգիչ, կավիճ, գրատախտակ, նկարներ:

Դասի ընթացքը.

Դասը կարելի է սկսել, որըէ ազգագրական երգով անգամ խմբերգով: Որից հետո դասարանը մեկից-չորս հաշվով բաժանել խմբերի՝ յուրաքանչյուր խմբի տալով տոների՝ Համբարձում, Վարդավառ, Զատիկ, Բարիկենդան, Նոր տարի և այլն, վերաբերյալ 1-2 էջանոց նյութ: Դրանով սովորողները 10-15 ր աշխատում են, փորձում են տեղում դերային խաղի միջոցով պատրաստվել ու ներկայացնել ուսուցչին ու դասարանի մյուս աշակերտներին: Մյուս առարկաների ուսուցիչների օգնությամբ փորձում են հիշել ժողովրդական ու ազգագրական երգերն ու պարերը: Պատմել թե իրենց ընտանիքներում ինչ ավանդույթներ կան պահպանված, և որն է իրենց սիրած տոնը: Որպես նախորդ դասի տնային աշխատանք, նրանք արդեն պիտի ունենան ծնողներից, տատիկ, պապիկներից գրի առնված պատմություններ: Կամ օրինակ կարող են ներկայացնել իրենց տոհմի պատմություն, գծել տոհմաձառը և այլն:

Դասի ամփոփում.

Դասի վերջում ամփոփելով աշակերտները պաստառին գրում են թե ինչ սովորեցին, կատարում իրենց եզրակացություններն ու ընդհանրացումները: Ուսուցիչը հարցերի միջոցով կատարում է անդրադարձ, ամփոփում է դասը անդրադառնալով հիմնական գաղափարներին, որոնք հնչեցին դասի ժամանակ.

Համագործակցական խմբերի նպատակը.

- Անհատական և խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել:
- կարողանալ ճիշտ բացատրել:
- կարողանալ տրամաբանված վերլուծել

Վերահսկում և միջամտում.



- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:
Գնահատում (նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).
- Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.
Անդրադարձ.
- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Օգնություն ուսուցչին

<http://blognews.am/arm/news/27489/82-tari-araj-ays-ory-kayacvec--sb-poxos-petros-ekexecin-gandelu-masin-hantcharex--oroshumy.html>

[http://historicaldis.ru/blog/43771114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?](http://historicaldis.ru/blog/43771114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1)

[utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1](http://historicaldis.ru/blog/43771114635/Soyuz-voinstvuyuschih-bezbozhnikov-SSSR?utm_campaign=transit&utm_source=main&utm_medium=page_0&domain=mirtesen.ru&pad=1)

<https://www.slaq.am/arm/news/151219/>

http://masis.tv/component/option,com_afm/pid,128/vfile,1712/lang,hy/

<https://www.youtube.com/watch?v=JumYRLEzWjU>

<http://www.mediamax.am/printpage.php?lang=am&nid=5055>

<http://hetq.am/arm/print/10138/>

https://www.facebook.com/note.php?note_id=291922430822840



ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԻ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ

ԴԱՐԱՎՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆ Է,

ՈՐԸ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՕՐ ՉՈՒՆԻ

ԻՐ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԱՇԱԿԵՐՏԸ...

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝
Առարկան՝
Դասարանը՝
Ամիս, ամսաթիվ՝
Տևողությունը՝
Թեման՝
Հարակից առարկաները՝

Միջառարկայական
Հայոց պատմություն
5-րդ, 6-րդ և 10-րդ
--. --. 2014 թ.
45 րոպե
Արտաշեսյանների արքայատոհմ
ա) Հայոց լեզու և գրականություն, ուս.՝ -----
բ) Ռուսաց լեզու, ուս.՝ -----
գ) Համաշխարհային պատմություն, ուս.՝ -----

Դասի նպատակը.

Դասի նպատակն է ամփոփել Արտաշեսյան արքայատոհմի պատմությունը և բարձր գնահատել նրա դերը հայոց և համաշխարհային պատմության մեջ: Աշակերտներին ծանոթանալ Հայոց պետականության պատմության վառ էջերից մեկին և սովորել դասեր քաղել անցյալից:

Խնդիրներ

- Վեր հանել տվյալ ժամանակաշրջանում աշխարհում տիրող քաղաքական իրադրությունը և համաշխարհային պատմության հոլովությունը ներկայացնել հայոց պատմությունը:
- Լուսաբանել Արտաշեսյան արքայատոհմի արքաների վարած գործունեությունը:
- Ճանաչել, սովորել ու դառնալ կրողը ազգային պատմության:

Մեթոդներ և մեթոդական հնարներ.

Կարճ դասախոսություն, խմբային աշխատանք, աշխատանք աղբյուրների հետ, անհատական աշխատանք, քննարկում, ունկնդրում, ցուցադրում, դիտում, համեմատություն, վերլուծություն:

Պարագաներ. Թուղթ, գունավոր նշագրիչներ, համակարգիչ, կավիճ, գրատախտակ, նկարներ:



Դասի ընթացքը.

(վարող՝ պատմության մասնագետ)

Դասը սկսել Մովսես Խորենացու խոսքերով հայոց պատմության մեջ կատարված մեծ ու հզոր գործերի մասին: Այնուհետև աշակերտներին հարցնել.

Ինչ գիտեք Արտաշեսյան արքայատոհմի արքաների, նրանց վարած քաղաքականության մասին: Աշակերտների գիտելիքները վեր հանելու հետո դիտել փոքրիկ հատված <<Տիգրանմեծ>> փաստագրական ֆիլմից:

<https://www.youtube.com/watch?v=h5U6zBMspPo>

Այնուհետև առաջարկել աշակերտներին պատասխան կամ գրատախտակին գրել երեք հիմնական գաղափար, որը սովորեցին ֆիլմից: Առաջադրված հարցերի միջոցով հիշել Մեծ Հայքի բոլոր արքայատոհմերին՝ հայոց մյուս արքայատոհմերի համակարգում Արտաշեսյանների իշխած ժամանակաշրջանը տարբերակելու համար:

(վարողներ՝ պատմության, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի մասնագետներ)

Հիշել հայոց և համաշխարհային գրականության մեջ առկա ստեղծագործությունները Արտաշեսյանների արքայատոհմի ներկայացուցիչների մասին:

Օրինակ.

- Աշակերտների միջոցով ներկայացնել «Արտաշես Արտավազդ» վիպերգը, արտասանել վիպերգից հատվածներ գրաբարով և աշխարհագրորդ, նշել գրաբարի գրության և արտասանության տարբերությունները:
- [Խոսել Վալերի Բրյուսովի «Տիգրան Մեծ» բանաստեղծության մասին, արտասանել այն, ներկայացնել հայոց արքային վաճումները:](#)
- Ներկայացնել, որ Տիգրան Մեծի մասին գրվել են ավելի քան 23 օպերաներ և ունկնդրել Վիվալդիի՝ Տիգրան Մեծին նվիրված օպերայից մի հատված:
- Ներկայացնել հայ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի «Արտավազդ» բանաստեղծություն:

(վարողներ՝ պատմության, հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի մասնագետներ)

Դասի այս հատվածը ամփոփելուց հետո դասարանը բաժանել երկու խմբի և հանձնարարել տեղում կազմել խաչբառ «Արտաշեսյան արքայատոհմը» թեմայով: Յուրաքանչյուր խմբի խաչբառը կլրացնի մյուս խումբը: Այնուհետև հարց ու պատասխանի միջոցով ամփոփել դասը կատարել ընդհանրացումներ:

Աշակերտները ստանում են տնային հանձնարարությունը (5 ր):



Տնային աշխատանք.

Դասի այս հատվածից հետո կատարել ընդհանուր ամփոփում և հանձնարարել աշակերտներին Արտաշեսյան արքայատոհմի որևէ գործչի մասին գրել էսսե:

Համագործակցական խմբերի նպատակը.

- Խմբային աշխատանք կատարելու հմտություններ:
- Բնագրի վրա աշխատելու կարողություններ:
- Հիմնական գաղափարների բացահայտում:

Բացատրել հաջողության հասնելու չափանիշները.

- կարողանալ դիմացինին լսել:
- կարողանալ ճիշտ բացատրել:
- կարողանալ տրամաբանված վերլուծել

Վերահսկում և միջամտում.

- հետևել համագործակցությամբ աշխատելու կանոններին:

Գնահատում(նախօրոք ներկայացնել գնահատման ձևը).

- Խմբային աշխատանքների գնահատման (ռուբրիկ) սանդղակ.

Անդրադարձ.

- Նախատեսված ո՞ր աշխատանքը չկատարվեց:
- Ի՞նչ կարելի է ավելացնել:

Օգնություն ուսուցչին.

1. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր.,1981:
2. Ստրաբոն, Եր.,1940:
3. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հատ Ա., Եր.,1985:
4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ.1, Եր.,1981:
5. Սելիք-Բախշյան Ս., Հայոց պատմության աղբյուրագիտություն (հնագույն ժամանակներից մինչև XVIIIդարի վերջը), Եր.,1979:
6. Ադոնց Ն., Հայ հին շինականությունը, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ 1948:
7. Աստուրյան Հ., Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմա 190-են ն.հ. մինչև 428թ. յ.ք., Վենետիկ 1912:
8. Դանիելյան Ա., Արտաշես I-ի հաստատած սահմանաքարերի իրավական նշանակությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, թ.3, էջ 235-244:
9. Դանիելյան Է., Արտաշես I-ի հողային քաղաքականության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1974,թ. 4, էջ 129-132:
10. Էլչիբեկյան Ժ., Հայաստանը և Սելևկյանները,Եր.,1979:



11. Ժամկոչյան Հ., Հայ ժողովրդի պատմություն, պրակ1, Եր., 1961:
12. Ժամկոչյան Հ., Աբրահամյան Ա., Մելիք-Բախշյան Ս., Պողոսյան Ս., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Եր., 1975:
13. Լեո, Երկերի ժողովածու, հատ., 1, Եր., 1966:
14. Կրկյաշարյան Ս., Բղեշխությունների առաջացումը Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, թ.4, էջ 257-262:
15. Կրկյաշարյան Ս., Թագավորական իշխանությունը հին Հայաստանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թ.1, էջ 158-167:
16. Կրկյաշարյան Ս., Պետական ապարատի կազմավորումը և նրա հետագա զարգացման փուլը հին Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, թ.1-2, էջ 225-238:
17. Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ. ա VI- մ. թ. IVդ.), Եր., 2005:
18. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրությունը, Եր., 1984:
19. Հայ ժողովրդի պատմություն, հատ.1 (ԳԱ հրատ.), Եր., 1971:
20. Մանասերյան Ռ., Թագավորական իշխանության հաստատության զարգացման առանձնահատկություններն Արտաշեսյանների օրոք, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, թ.1, էջ 77-85:
21. Մանանդյան Մ., Հ., Երկեր, հատ. Ա, Եր., 1977:
22. Մովսիսյան Ա., Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը, հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Եր., 1997:
23. Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. Vդ. և մ.թ. XIVդ.) Եր., 1983:
24. Շահինյան Լ., Հայաստանը և առաջին Արշակունիները, Եր., 1993:
25. Շահնագարյան Ն., Հայ - իրանական և հայ - հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ.թ.ա.VIդ.-մ.թ.Vդ.), Եր., 1990:
26. Սարգսյան Գ., Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Եր., 1962:
27. Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966:
28. Սարգսյան Ս., Հայ ռազմական արվեստի պատմությունից, Եր., 1969:



29. Սվազյան Հ., Արտաշես Ա-ի կողմից Կասպիանե-Փայտակարան մարզի «նվաճման» հարցի շուրջը (ըստ Մ. Խորենացու տվյալների), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1991, թ.3, էջ 55-59:
30. Տիրացյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի մ.թ.ա. III-II դդ. պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, թ.6, էջ 21-23:



**Գիտելիքները մարդուն կշիռենտայիս, իսկարարքները՝ փայլ: Մակայն մարդկանց մեծ
ամասնությունը կարողանում է միայն փայլել, բայց ոչ կշռադատել:**

(այս խոսքերը պետք է ունենալ պաստառի վրա, որն
աշակերտները կտեսնեն դասի ամբողջ ընթացքում)

Ինտեգրման տեսակը՝	Միջառարկայական
Առարկան՝	Հայոց պատմություն
Դասարանը՝	5-րդ, 7-րդ և 10-րդ
Ամիս, ամսաթիվ՝	--. --. 2014
Տևողությունը՝	45 րոպե
